

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՉԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Հայաստանյայց Եկեղեցվո Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի 81-րդ տարեկան պատգամավորական ժողովը, որ գումարվեցավ հյուրընկալությամբ Փալոս Հայթսի Սուրբ Հովակիմ և Աննա Հայաստանյայց Եկեղեցվո մայիս 5—7 1983, խանդավառությամբ ընդունեցավ Ձերդ Սրբության ներկայացուցիչները՝ Տ. Գարեգին վարդապետ Ներսիսյան և Տ. Նորայր քահանա Ավագյան:

Պատգամավորական ժողովի առաջին նիստին ներկաները մեծ ուշադրությամբ ունկնդրեցին Ձերդ Վեհափառության ողջույնի և օրհնության գիրը և անգամ մը ևս արձանագրեցին իրենց խոր հարգանքը և անվերապահ հավատարմությունը հանդեպ Ձերդ Սրբության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Կաղոթենք, որ ամենակալն Աստված միշտ անսասան, պայծառ և բարգավաճ պահե Հայաստանյայց Եկեղեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանիին և Ձերդ Սրբության հոգևոր վեմին իշխանության ներքև և Վեհիդ պարգևե մշտատև քաջառողջություն և արևշատ տարիներ:

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Փալոս Հայթս (ԱՄՆ),
10 մայիսի 1983 թ.